«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

**Արձանագրություն թիվ 4; 23.12.2024թ.**

**1. Ռեկտորատի նախորդ նիստի որոշումների կատարողականի վերաբերյալ**

Ընդունել ի գիտություն:

**2. ՀԱԱՀ հեռակա ուսուցման համակարգում ուսումնական գործընթացի և կիսամյակային քննությունների կազմակերպման վերաբերյալ**

Ընդունել ի գիտություն:

**3. ՀԱԱՀ ուսումնական ստորաբաժանումների ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարման և գնահատման վերլուծության արդյունքների վերաբերյալ**

Ընդունել ի գիտություն:

**4. ՀԱԱՀ 95-ամյա հոբելյանական միջոցառումների կազմակերպման նպատակով հանձնաժողով ձևավորելու հարցի վերաբերյալ**

Ընդունել ի գիտություն, քննարկել և 2025թ. ռեկտորատի առաջին նիստի ընթացքում ներկայացնել առաջարկություններ ՀԱԱՀ 95-ամյա հոբելյանական միջոցառումների կազմակերպման հանձնաժողովի կազմի վերաբերյալ:

**5. «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանող Արամ Աբրահամյանի ինքնուրույն աշխատանքների ու քննությունների հանձնման կարգի վերաբերյալ**

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի «Պարենամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանող Արամ Աբրահամյանի ինքնուրույն աշխատանքների և քննությունների հանձնման գործընթացը կազմակերպել բանավոր ձևաչափով:

**6. Թեստային քննությունների կազմակերպչական հարցի վերաբերյալ**

Ընդունել ի գիտություն:

**7. Համակարգչային լսարանների և տեխնիկայի պահպանության հարցի վերաբերյալ**

Ընդունել ի գիտություն:

**8. Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ ՀԱԱՀ աշխատակիցներին լրավճար տրամադրելու հարցի վերաբերյալ**

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի վարչական, պրոֆեսորադասախոսական, ինժեներատեխնիկական, վարչատնտեսական, Ա.Ե. Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի, Սիսիանի և Վանաձորի

մասնաճյուղերի, հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի բոլոր հիմնական աշխատողներին, 2024 թ. դեկտեմբեր ամսվա համար սահմանել լրավճար հետևյալ չափերով.

- 4 ամսից մինչև 6 ամիսը ներառյալ աշխատողներին՝ հիմնական մեկ դրույքի 50 տոկոսի չափով,
- 6 ամսից ավելի աշխատողներին՝ հիմնական մեկ դրույքի 100 տոկոսի չափով,
- Վանաձորի մասնաճյուղի 6 ամսից ավելի աշխատողներին՝ հիմնական մեկ դրույքի 30 տոկոսի չափով:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ՋԱՔՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ